

ՊՈԼՍՈՅ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ»Ը ԵՒ ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԸ

Բանալի բառեր՝ «Ճակատամարտ», Յակոբ Օշական, պատմուածքների շարքեր, հրապարակագրություն, գերմանական «Կայսերական յաղթերգություն», գրամշակութային անդրադարձներ:

Keywords: “Chakatamart,” Hagop Oshagan, series of stories, publication, Germanic “Imperial Trumph,” literary-cultural references.

Արեւմտահայ մամուլի պատմութեան մէջ ազգային-քաղաքական հարուստ եւ հատու ենթախորքերով կայուն նախասիրություն դարձան 20-րդ դարասկզբին ծնունդ առած «մարտ» ազգային արթնություն պահող բաղադրիչով ւարժաւոր խորագրերը: Ռուբէն Զարդարեանը 1909-1914 թթ. հրատարակեց «Ազատամարտ»ը, որի հոգեգրականները դարձան «Առաջամարտ»ը (1912), «Արդարամարտ»ը (1918), «Արիամարտը» (1918), մեզ համար շահագրգիռ «Ճակատամարտ»ը (1918), որոնց աջակից-արտօնատերերի մէջ ստեպ-ստեպ հանդիպում էին Շաւարշ Միսաքեանը, Գեղամ Բարսեղեանը, Յակոբ Սիրունին, Վրթանէս Մարտիկեանը, Վարդգէս Սերէնկիւլեանը եւ ուրիշներ: Խորագրերի բազմապիստությունը արդարացուած էր անընդմեջ ընդհատում-արգելակումներով, որ յարուցում էր թուրքական գրաքննությունը: Ահա թէ ինչու էր այդքան յաճախ յամառում յայտնուել նաեւ «մարտ» բաղադրիչը: Դա ցոյց է տալիս նաեւ 1918-ի յաջորդական թուագրությունը. 1-ից 12 համարները «Արդարամարտ», 13-ից 32-ը՝ «Արիամարտ», իսկ ահա 1918-ի Դեկտեմբեր 27-ից՝ «Ճակատամարտ», ընդհուպ 1924 թուականի Հոկտեմբերի վերջերը:

Պէտք է ընդգծել, որ Պոլսում յայտնուելուց յետոյ Յ. Օշականին պատմուածքների եւ յօդուածների, գրախօսությունների, հրապարակագրական էջերի միջոցով ազատ գնահատությունների ստեղծագործական ասպարէզ է տրամադրում հենց «Ճակատամարտ»ը: Նախ, այստեղ էր խմբագրապետը, իրեն դէռ «Արեւելք»ի շրջանից յայտնաբերած, գրական մուտքի դարպասներ բացած Շ. Միսաքեանը: Այստեղ էին Ե. Օտեանը, Յ. Սիրունին, Մանուկ Արսլանեանը եւ գրական-լրագրական ուրիշ յայտնի դէմքեր: Աւելորդ չէ նշել, որ Յակոբ Քիւֆէճեանը իր պատմուածքներից մինչ այդ հրապարակել էր «Ազատամարտ»ում եւ նրա յաւելուածներից՝ «Ազդակ»ում («Պատուին անէծքը», 1909) եւ «Բազին»ում («Կանանց-Կիրակի», 1912):

«Ճակատամարտ»ում երէկուայ պրոսագին այլեւս եւ մէկընդմիջտ գործածութեան մէջ դրեց նոր՝ «Օշական» գրչանունը: Դա Արտաշէս Յարությունեանի առիթով էր, ով իր կեանքում ուսուցչի դերակատարություն ուներ: Բաւական է ասել, որ Մալկարայում, ուր Յակոբը անցել էր մօր մահից անմիջապէս յետոյ, 1911-ին, նա բացայայտեց եւ ֆրանսերէնով կարդալ տուեց Ֆեոդոր Դոստոեւսկու վէպերը: Ուսուցչի մասին տպաւորիչ ակնարկ կայ «Ճակատամարտ»ի էջերում. «Ով որ ինծի պէս մտիկ ըրած է այդ պզտիկ մարդը, մեծ սօսիի մը տակ, խոնարհող արեւի մը դէմ, պիտի սիրէ հաւատալ խօսքի ուժին, այն սկիզբները անորոշ, հետզհետէ գունաւորուող դորդումին, որ կը բռնէ քեզ քու միամտութեանդ մէջ ու քիչ քիչ, ծաւալուն իսկութեան մը կրակովը կամ քաղցրութեամբը կը ճիւղաւորուի քենէ ներս: Քանի մը նման փորձերէ ետք օր մըն ալ կը զգաս ...իր ազդելու, թելադրելու եղանակը» [«Ճակատամարտ», 1919, թիւ 181, էջ 1]: Ի դէպ, նոյնիսկ 40-ական թթ. Օշականը պահում էր նշանաւոր «գիշերուան ճամբորդի» հանդէպ երախտագէտ յիշողությունը¹:

«Ճակատամարտ»ի 1919-ի Յունուարի առաջին երկու օրերին Օշականը հանդէս է գալիս «Տարելից մը / տարեվերջի խոհեր» եւ «Ակնարկ մը 1919-ի հանդէսներուն վրայ» մտածումն ու տեսությունը ամփոփող, իսկ Փետրուարի 8-ի եւ 15-ի համարներում՝ «Ազգայնականությունը (մեր գրականութեան մէջ)» յօդուածներով: Վերջինում քննում է հայկական գրամշակութային երկու

¹ «Համապատկեր...»ում Ա. Յարությունեանի դիմանկարի հատուածում նոյնպէս տրուում է ենթակայական ջերմ յիշողութեան. նրա «...հետ իմ յարաբերությունները եղեր են մտերմական, քան ուրիշ ոեւէ գրողի հետ...» [Օշական, 1980, 113], «Խոնարհները» կը պարտիմ իր թելադրութեան» [նոյն տեղում, 110]:

հատուածներում ազգային սրացած շեշտադրութիւնները: Հրապարակագրական յօդուածներից կարող ենք նշել նաեւ Մայիսի 16-ի համարում «Վրդովումը» պատկուիլը եւ ոչ պակաս ընդվզումով գրուած «Ռամիկ յարգանքը» յօդուածը, վերջինը՝ «Գրական խժոժութիւններ» խորագրի ներքոյ:

Նկատենք, որ «Ճակատամարտ»ի 1920-ի նոյն համարի առաջին էջում, հանդիպակաց հատուածներում, նոյն խնդրի շուրջ կիսահեգնախառն վերաբերմունք էին մշակել Յ. Օշականը եւ Եր. Օտեանը՝ վերհանելով իւրատեսակ զգվոտոց-«աքլորամարտը», որ յաճախ էր ծաւալում խմբագրութեան մէջ: Խօսքը վերաբերում է Յ. Օշականի վերոնշեալ «Գրական խժոժութիւններ» եւ Եր. Օտեանի վարած «Օրը օրին» սիւնակների ներքին թեմատիկ բովանդակութեան զարմանալի համընկնումներին: Երկուսի ենթավերնագրերում խօսքի ուղղութեան իմաստային «հատիկը» «յարգանքի» չափաբաժինն է, որ, նախ, ոտնահարել էր Ենովք Արմէնը, երբ 1920-ի Օգոստոսի առաջին տասնօրեակում ձեռք էր նետել նահատակ բանաստեղծ Ա. Յարութիւնեանի «արինոտ շապիկին»՝ առաջ բերելով Յ. Օշականի բուռն զայրոյթը, որտեղ «ռամիկ» արտայայտութիւնը ցածրակարգի հոմանիշն էր, աւելի մեղմ՝ գրչակների (այս պարագային՝ ենովքարմէնների եւ նրա նմանների) «գաճաճ» մօտեցումը: Յ. Օշականը, խիստ դժգոհ անփառունակ գրագէտի մանրախնդիր ձգտումից, «դառնօրէն ճշմարիտ օրէնքի» յայտնատեսութեամբ սպանիչ եզրայանգման է գալիս, թէ «դարձեալ յետ մահու հաշուեյարդարութեան ընդվզեցուցիչ էջ մըն է Պ. Ենովք Արմէնի գիսախորի մէկ ուսումնասիրութիւնը», եւ աւելացնում. «Տարաբախտօրէն ճիշդ է, որ մեր գրագէտ նահատակներուն նուիրուած ամէն թիւ, յարգանքի ցոյց մը ըլլալէ աւելի ...առիթ մըն է, երջանիկ ու կարմիր առիթ մը հաշիւներ մաքրելու ասոր կամ անոր դէմ» [«Ճակատամարտ», 1920, թիւ 529, էջ 1]:

«Յարգանքի» երկրորդ «արտայայտութեան» հեղինակը Երուանդ Օտեանն է, միայն թէ աւելի թունոտ, սարկազմով: Որքան էլ զարմանալի է, վերջինիս նօթը յիշեցնում է թատերական կառոյց խմբագիրների վարած այլեւայլ գրոյցների խորքի վրայ, ինչը երգիծանք է աւելի, քան մտահոգութիւնների կարգ: Մեր կարծիքով, հենց այս գրութիւնն էլ մի քանի տարի անց կարող էր նախահիմք հանդիսանալ Յ. Օշականի «Աքլորամարտ»ի առաջին տարբերակի համար: Եր. Օտեանը գրում է, որ ընդամենը մէկ օր առաջ մասնակցել էր խմբագիրների հանդիպմանը, ուր 1915-ի նահատակների «նոր ողջակէզի մը պատրաստութիւն» էր նկատել՝ «անգամ մըն ալ մեռցնելու, անոնց յիշատակին յարգանք մատուցանելու պատրուակին ներքեւ» [նոյն տեղում], ի շարս այլոց՝ նաեւ Ա. Յարութիւնեանին:

Սրանք 1920-ի մեր պոլսական մտաւորականութեան իմացութեան խեղճուկրակ, «տեղական» մակարդակի պատառիկներն են: Բանավէճ չկայ, մտքի պարապութիւն է, եւ ցաւալին այդ մակարդակի հետ ինքնաբաւ հաշտութիւնն է, ինչից խորապէս դժգոհ են եւ Եր. Օտեանը, եւ Յ. Օշականը:

Յ. Օշականի տեսադաշտում նաեւ արեւելահայ դէմքերն են, ինչպէս Յովհաննէս Թումանեանը եւ Աւ. Իսահակեանը, որոնցից առաջինի ստեղծագործութեան տարբեր շերտերին անդրադառնում է ծաւալուն յօդուածաշարով խոստովանելով, որ «արեւմտեան Հայերուս համար դժուար է արդարութեամբ մօտենալ Արեւելահայ գրականութեան», քանի որ վերջինս «օտար ու անծանօթ պայմաններու կը հպատակի» [«Ճակատամարտ», 1921, թիւ 923, էջ 1], միաժամանակ այդ խորթութեան միջից վերբերելով Թումանեանի գործը՝ իբրեւ «ազնուական բարութիւն մը, մաքուր մեր ցեղին հոգիին նման» [նոյն տեղում, թիւ 927, էջ 4]:

Աւ. Իսահակեանի հանդէպ Յ. Օշականի վերապահ եւ ժխտական մօտեցումները արձանագրուած են աւելի վաղ շրջանի քննադատական տարբեր նօթերի մէջ, դեռ այն ժամանակից, երբ Յովհ. Թումանեանը դարասկզբի պօէմը համարում էր «մեծ դալմադալ»: Սակայն թերեւս «Ճակատամարտ»ի 1920 թ. սեպտեմբերեան թուերի մէջ է, որ Յ. Օշականը համակարգում է հայեացքի ուղղութիւնը՝ քննական մասնաւոր նիւթ դարձնելով «Աբու Լալա Մահարի»ի հարցադրումներից բխող հին ու նոր մեկնութիւնները: Ուշագրաւ է նրա մօտեցումը ոչ այնքան բանաստեղծի մեծութեան աւանդական ընկալման, որքան գրական տեսակէտի խորացման արդիւնաւորութեան առումով, եւ այն հարցին, թէ ինչ է, ի վերջոյ, «Աբու Լալա Մահարի» պօէմը՝ «Բսկական նաւաբեկութեան եղերե՞րգ մը, հսկայ նգո՞վք մը ժամանակակից այնքան ճղճիմ հաճոյապաշտութեան դէմ, որ մարդերը գործիքը կը դարձնէ անորակելի կիրքերու...», պատասխանում է՝ «...անբնական, ան-

մարդկային, անիրական, որեւէ ձեւով, ուղտերու քամակին, արեւու վրայ խոյանալու... ծիծաղելի ու հասարակ տօնքի շօտութիւն» [«Ճակատամարտ», 1920, թիւ 564, էջ 1]:

Հարկ է յիշատակել ընթացիկ գրականութեան շուրջ օշականեան անդրադարձը 1921-ի յունուարեան առաջին երկու համարներում՝ «Օրուան գիրքեր» վերտառութեամբ, ներքին յստակ կարգաւորումով², երբ հրապարակ է հանում Ե. Օտեանի եւ Թէոդիկի կազմած տարեցոյց-տարեգրքերի շուրջ գրախօսականները, որոնք աւելի մօտենում են գրական մեկնական դիմանկարի ենթաժանրին, քան բուն տարեգրքերի ընդգրկումին կամ ուղղութեանը վերաբերող հարցերին:

Նկատենք, որ քննադատական գրութիւնների կողքին Մայիս 28-ի առթիւ նրա հրատարակած ողջոյնի ոգեկոչ խօսքը փնտրում է «նոր օրերու տեսանողը, բանաստեղծը ու խորհողը», այն դիւցազներգուն, որ պիտի մօտենայ մեր ժամանակի «ուրիշ մէկ հրաշքին, մեր ազատութեանը յաղթերգանքին» [նոյն տեղում, թիւ 464, էջ 1]: Առինքնող ոգեւորութիւնն է իշխում «Գեղի մեր տողոց» ուղղուած պայքարի կոչի մէջ՝ բարձրացնել մեր եռագոյնը, ելնել երկրի փաստացի ազատագրութեան, պայքարի բռնուցք դառնալ՝ պարտքի լեռնացումով: «Գեղը» մեր երկրի, «տղաքը»՝ երկիր վերադարձնող մեր զինուորի խորհրդանշաններն են, իսկ «պարտքը»՝ մաքառող ուխտաւորի բռնած հերոսական ճամբան, նպատակը՝ «Ցուցուցէ ք մարդերուն թէ դուք հարազատ շառաւիղները կը մնաք ցեղերուն ամենէն ազնիւներէն մէկուն...: Լեռնէ՛ լեռ, ծովէ՛ ծով...: Տղա՛ ք, պատմութիւնը ձեզի կը նայի» [նոյն տեղում, թիւ 523, էջ 1]:

Հոկտեմբերին արդէն դէպի ճակատ մեկնող տղաների մէջ տեսնում է իր մանկութեան ընկերոջը. նոյն «տողոց» տողանցքն է կարծես՝ տուն եւ երկիր պահելու վճռականութեամբ, ինչի նկատմամբ անվերապահ է գրողի հաւատը: Նրան պէ՛տք է վստահել. «Զարմանքով ու քիչ մըն ալ հիացիկ կը նայիմ անոր հոգիի շէնքին: Ո՛րքէ եւ ի՛նչպէս գեղի այդ տղան տորվեցաւ, այսպէս մէկէն, իմաստութիւնը անիմաստ բառերուն» [«Ճակատամարտ», 1920, թիւ 588, էջ 1]³: Ճակատ է գնում նա, եւ հնչում է հրաժեշտի տխրամած խօսքը՝ «Մնա՛ւ բարով: Կ'ըլլայ որ ալ չենք տեսնուիր» [նոյն տեղում]:

Առանձին քննութեան առարկայ է 1920-ի Յունուարից «Ճակատամարտ»ում Յ. Օշականի կարճ արձակի՝ ազգային-քաղաքական խորքով շնչառութիւնը՝ «Կայսերական յաղթերգութիւն» խորագրով պատմութեամբ:

1922-ին «Խորհուրդներու մեհեանը» գրքի հրատարակութեան ծանօթագրութեան մէջ նշում էր, որ պատմութեան երրորդ ժողովածուն պատրաստ է եւ շուտով հրապարակ կ'իջնի «Կայսերական յաղթերգութիւն» խորագրով: Սակայն այդ «շուտովը» ձգուեց աւելի քան վաթսուն տարի: Գրողի ծննդեան 100 ամեակի առթիւ 1983-ին լոյս տեսած մատենաշարի գրքերից էր «Կայսերական յաղթերգութիւնը»⁴, ուր խմբագիր Պօղոս Սնապեանը ներմուծել է լրացումներ, պայմանական «յաւելագրումներ», որոնք այնքան էլ թեմատիկ առնչութիւններ չունէին նշեալ շարքի հետ. այնտեղ գիւղաշխարհ եւ անհատի ներաշխարհ բացող պատմութեանքներ ու հեքիաթներ էին՝ «Հինէն ու նորէն», «Երբ պզտիկ են»⁵ ենթախորագրային բաժանումներով: Այն իսկապէս, ժողովածուի արժէքով, նշանակալի իրադարձութիւն էր: Յաւել, Դաւիթ Գասպարեանը այս շարքը դիտում է ծաւալուն «վէպ», որը «Ճակատամարտ»ում, իր կարծիքով, լոյս է տեսել անհամեմատ աւելի ուշ, 1922-1924 թթ. [Գասպարեան, 2000, 40]: Ահա թէ ինչու, ներքին կարգապահութեան տեսակետից աւելի յուսալի եւ ճշգրիտ է իբրեւ սկզբնաղբիւր «Ճակատամարտ»ում եղած «Կայսերական յաղթերգութիւնը», որն

² Մ. Նշանեանը խորագիրը նշում է «Օրուան գիրքերէն» [«Յակոբ Օշականի մատենագիտութիւն», 53]:

³ Այստեղ փոքր-ինչ քողարկուած նկատելի է Վահան Թէքէեանի պատկերային մտածողութեան հետքը, որն ինքնին ուշագրաւ է Յ. Օշականի արձակում: Մի կողմում դարերի մէջ պայքարած ու դիմացած հայոց լեզուն է, որի «արմատներուդ, ճիւղերուդ վրայ նայելով հիացիկ» անցնում է բանաստեղծը [Թէքէեան, 1914, 182], միւս կողմում՝ այդ լեզուն պաշտպանելու ելած եւ «անիմաստ բառերուն իմաստութիւնը» իրացրած զինուորի նկարագիրը:

⁴ 1977-ին «Բագին»ում խմբագրական կարճաոտ նօթ կայ շարքի ստեղծագործական պատմութիւնից, երբ սեպտեմբերեան համարում հրապարակում է «Արծիւները» պատմութեամբ: Այս մասին տե՛ս՝ **Օշական Յ.**, Ամբողջական գործեր, հ. 1, Եր., «Զանգակ», 2020, էջ 753:

⁵ Այս երկու, ինչպէս նաեւ «Երբ պատանի են» շարքերի տարբեր գործեր տեղ են գտել «Ճակատամարտ»ի էջերում:

էլ ընկել է 2020-ին լոյս տեսած «Ամբողջական գործեր»ի առաջին հատորի բնագրերի կազմման հիմքում:

Ժամանակին այս շարքի՝ առանձին գրքով չտպագրելու պատճառն ասելի քան առարկայական էր, մեծ մասամբ պայմանաւորուած քաղաքական դրդապատճառներով: Բանն այն է, որ վրայ հասած քեմալական նոր հալածանքների հետեւանքով շիջում է յունական Մուդրուս նաւահանգստում կնքուած Զինադադարի առկայծ ոգեւորութիւնը, եւ մեր գրագէտների զգալի մասը լքում է արեւմտահայ գրական հինաւուրց ոստանը: Ուշագրաւ է, որ Պոլսից վերջնականապէս հեռանալուց յետոյ Յ. Օշականը երբեւէ տպագրութեան չներկայացրեց այն: Թերեւս ողջ ստեղծագործական շրջանում «Կայսերական յաղթերգութիւն» շարքը՝ «Յառաջաբանի տեղ» փառահեղ մուտքով, «Արծիւները», «Վրդովուած խղճմտանքը», «Տանտան»ը, «Վրէժը», մէկ տարի անց, 1921-ին, շարքը լրումի հասցրած համանուն «Կայսերական յաղթերգութիւն» պատմուածքներով, եղերական նիւթի գեղարուեստական մշակման գայթակղութիւնն էր, որի ներքին ընդգրկումներից, յատկապէս նատուրալիստական սրուած հակումներից, հեղինակն ինքը կարող էր այնքան էլ գոհ չլինել: Յայտնի է, այդպիսի վիճակների մէջ յետագայում, վէպերում, նա յաճախ ընկել է եւ ըստ էութեան՝ ընկրկել:

Յ. Օշականի համար պարզ էր թուրքական ոճի գերմանական ենթահողը, որն ամբողջացրել էր շարքի խորագրում՝ խտացնելով քաղաքական շահերի խորքերում ծուարած, բայց շատ արագ ջրի երես ելած յայտնի դիւանագիտութեան անբարոյ քօղը՝ ուղղուած հայութեան ջարդերը խրախուսող գերմանական կայսրութեան բացորոշ դրսեւորումներին, երբ հիւանդագին Վիլհելմ կայսրը «...հանդուրժեց – չըսելու համար փառաբանեց – ոճիրներուն ամենէն անորակելին», որի դիմաց ունեցաւ, ստացաւ «այնքան վայրագօրէն նահատակուած մեր ցեղին մեծ ու պզտիկ բոլոր, բայց բոլոր հոգիներուն արգահատանքը...»:

Մեր ցեղը չի հեգներ: Չի կրնար ատել: Իր պատմութեան մէջ ան ամենէն ասելի մեղքցած է:

Ու ցեղին շառաւիղը պիտի չմերժեր իր աւանդութիւնը» [«Ճակատամարտ», 1920, թիւ 358, էջ 1]:

Եզրակացութիւնն այն է, որ այս պատմուածքները եւ թղթակցութիւնները ծրագրային որոշակի իրենց ընկալումով յստակեցրին Յ. Օշականի հայեացքի սուր ուղղութիւնը արեւմտահայ գրական զարգացումներում՝ ցոյց տալով, որ «Ճակատամարտ»ը գրողի ճակատամարտն էր նաեւ քաղաքական եւ ազգային մշակոյթի ծալքերի բացայայտման գործում:

SUMMARY

Immediately after the Genocide, the Constantinople daily newspaper “Chakatamart” became a platform for national-political issues, where Hagop Oshagan stands out with his positions and a clear artistic and political description. Here, next to the prose stories “When they are little,” “When they are young,” his series “Imperial Triumph” is published. The author of the article presents the main issues that touch both creative history and political evaluations. There are also literary-cultural references that played a role in the literary environment (Artashes Harutyunian, Yervand Otian, Yenovq Armen, later Poghos Snpian, Marc Nichanian and others).

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

1. Գասպարեան Դ., Հայ գրականութիւն / մեթոդական ձեռնարկ, Եր., «Զանգակ», 2000, 344 էջ:
2. Թէքէեան Վ., Հրաշալի Յարութիւն (1901-1914), Կ. Պոլիս, տպ. «Օ. Արզուման», 1914, 199 էջ:
3. Օշական Յ., Արտաշէս Յարութիւնեան (նիշեր) // Ճակատամարտ, Կ. Պոլիս, տպ. Ժ. Տանտան, 1919, Նոր շրջան, 15 Յունիս, թիւ 181 (2002), էջ 1:
4. Օշական Յ., Կայսերական յաղթերգութիւն / Յառաջաբանի տեղ // Ճակատամարտ, Կ. Պոլիս, տպ. Պէճիտեան Էդարց, 1920, 18 Յունուար, թիւ 358 (2179), էջ 1:
5. Օշական Յ., Յաղթանակներու օրը // Ճակատամարտ, Կ. Պոլիս, տպ. Պէճիտեան Էդարց, 1920, 28 Մայիս, թիւ 464 (2285), էջ 1:

6. Օշական Յ., Գեղի մեր տղոց // Ճակատամարտ, Կ. Պոլիս, տպ. Պէճիտեան եղբարց, 8 Օգոստոս, 1920, թիւ 523 (2344), էջ 1:
7. Օշական Յ., Ռամիկ յարգանքը (նուիրում թիւերու առիթով) // Ճակատամարտ, Կ. Պոլիս, տպ. Պէճիտեան եղբարց, 1920, 15 Օգոստոս, թիւ 529 (2350), էջ 1:
8. Օշական Յ., Աբու Լալա Մահարի (հեղ. Ա. Իսահակեան) // Ճակատամարտ, Կ. Պոլիս, տպ. Պէճիտեան եղբարց, 1920, 26 Սեպտեմբեր, թիւ 564 (2385), էջ 1:
9. Օշական Յ., Ճակատին համար / Ան որ կը մեկնի // Ճակատամարտ, Կ. Պոլիս, տպ. Պէճիտեան եղբարց, 1920, 24 Հոկտեմբեր, թիւ 588 (2409), էջ 1:
10. Օշական Յ., Յովհաննէս Թումանեան // Ճակատամարտ, Կ. Պոլիս, տպ. Մ. Իտարէճեան, 1921, 27 Նոյեմբեր, թիւ 923 (2744), էջ 1:
11. Օշական Յ., Յովհաննէս Թումանեան // Ճակատամարտ, Կ. Պոլիս, տպ. Մ. Իտարէճեան, 1921, 2 Դեկտեմբեր, թիւ 927 (2748), էջ 1 եւ 4:
12. «Յակոբ Օշականի մատենագիտութիւն» / կազմեց՝ Մարկ Նշանեան, Լոս Անճելըս, «Open Letter Journal», 1999, 197 էջ:
13. Օշական Յ., Համապատկեր արեւմտահայ գրականութեան, իններորդ հատոր / Արուեստագէտ սերունդ, Անթիլիաս, 1980, 534 էջ:
14. Օտեան Ե., Յարգանքի արտայայտութիւն // Ճակատամարտ, Կ. Պոլիս, տպ. Պէճիտեան եղբարց, 1920, 15 Օգոստոս, թիւ 529 (2350), էջ 1: